# ԴՌԱՆ ԱՌԱՋ

*ՌԻԽԿՆԸՐՏ'ից*՝ — ԹԱՐԳՄ. ՎԱՀԱՆ ԹԱՒԱՐԲԷԳԵԱՆԻ

---

Պինդ զարկի դուռը ես Հարստութեան՝
Վերից մի սև-փող նետեցին միայն.

Սիրոյ դռան առաջ շատ մարդ կար խռնած՝
Եւ զո՛ւր ես երկար մնացի կանգնած.

Բաղխեցի դուռը Փառքի ամրոցին՝
Զինւոր չէի, դուռը չը բացին.

Վախեցայ մտնեմ դուռնն Աշխատանքի՝
Ձայներ էր գալիս խուլ հառաչանքի.

Շատ հարց-փորձ արի Բաղդի ետեւից՝
Նրա դռան ճամբան ոչ-ոք չասաց ինձ.

Այժմ ինձ համար լոկ մի՛ դուռ մնաց,
Այդ վերջին դուռը կը բաղխեմ կամաց.

Տե՛ղ, անշուշտ, այնտեղ ինձ էլ կը բանան,
Թէև լեցուն է նեղ դուռը Մահուան։